ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 164 -Ա

« 22 » ՕԳՈՍՏՈՍԻ 2023թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 232-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023թ. հիմնական միջոցառումների» պլանի 9.3.1 կետը՝

Որոշում եմ

1. 2023 թվականի սեպտեմբերի 5-ին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (այսուհետ՝ ՑՀՏՈՒ) «Հրդեհաշիջման, որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը «Օլիմպիա» առողջարանի մասնակի փլուզված մասնաշենքում» թեմայով:
2. Նշանակել՝ ՑՀՏՈՒ-ի ղեկավար – Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին.
3. Ուսումնավարժությանը ներգրավել՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը, ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Ջերմուկի բաժինը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր ԳԳՄ» Ջերմուկի ՏՏ, «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ և ՀԷՑ ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի «Ջերմուկի էլ.ցանցի» ուժերը:
4. ՈՒսումնավարժության ղեկավարին՝ ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ, մշակել և հաստատել ուսումնավարժության նախապատրաստման փաստաթղթերը, կազմակերպել անցկացումը:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները,

2) ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնների պահանջների կատարումը,

6. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանի վրա:

8/22/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

p.Եղեգնաձոր